

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ ՀՅ ԳԱԱ ԱԻ

ԾՈՒՇԵՑԻ ՄԵԾ ՔԱԼԵԿԱԳՈՐԾԸ (Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Այս տարվա դեկտեմբերի 17-ին նշվելու է հայ մեծ քանդակագործ, 1881-ին Շուշի քաղաքում լուս աշխարհ եկած Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյա հոբելյանը: Այդ տարեդարձին է նվիրված սույն զեկուցումը:

Արվեստագետի մանկության ու պատանեկության, Շուշիում նրա անցկացրած տարիների մասին, դժբախտաբար, կցկոտուր տեղեկություններ ունենք: Դայտնի է, որ նա ծնվել է մանրավաճառ Մարգար Գյուրջյանի նահապետական բազմազավակ ընտանիքում: Վաղ հասակում կորցնելով ծնողներին, մնացել է իր ավագ եղբոր՝ Գրիգորի խնամքի տակ: 1889-ից մինչև 1896 թվականը հաճախել է Շուշվա ռեալական ուսումնարանը, որտեղ նրա հայոց լեզվի ուսուցիչն էր ապագա անվանի ազգագրագետ, բանասեր-բանահավաք, հայ կերպարվեստի գիտակ Երվանդ Լալայանը:

Յ. Գյուրջյանի գեղարվեստական բնատուր ծիրքը, իր աչքով տեսած կամ երևակայած կերպարները ծավալային շոշափելի ձևերով որևէ նյութի մեջ մարմնավորելու կարողությունը ի հայտ է եկել հենց աշակերտական շրջանում:

Նույն տարիներին, քանդակագործի շնորհից բացի, դրսնորվել է նաև Յ. Գյուրջյանի երաժշտական ընդունակությունը: Պատահական չէ, որ 1894-ին, երբ Շուշի է ժամանել նշանավոր երգահան, խմբավար, երաժիշտ-բանահավաք Քրիստափոր Կարա-Մուրզան, այստեղ երգչախումբ կազմել ու ներկայացրել հայ ժողովրդական և հոգևոր երգերը, նա սիրողական այդ երգչախմբի մեջ է գրավել նաև 13-ամյա Հակոբ Գյուրջյանին:

Շուշվա ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո Յ. Գյուրջ-

յանը մեկնել է Մոսկվա, ուր շուրջ իինգ տարի՝ 1899-ից մինչև 1904 թվականը ստվորել է ճարտարապետ Ֆիլիպի մասնավոր տեխնիկական ուսումնարանում և ծեռք բերել գծագրողի մասնագիտություն: Միաժամանակ նա շարունակել է զբաղվել քանդակագործությամբ, մտերիմ հարաբերություններ է հաստատել Գյոգոլի մոնկովյան հուշարձանի հեղինակ Նիկոլայ Անդրեևի հետ, հաճախել իտալիայից նոր վերադարձած արձանագործ Պաոլո Տրուբեցկոյի աշխատանոցը: Նրանց անմիջական ազդեցությամբ են ծևավորվել Յ. Գյուրջյանի գեղարվեստական հայացքները, հետաքրքրությունը մի կողմից՝ Եկրոպական դասական և ռեալիստական արվեստի, իսկ մյուս կողմից՝ իմարեսիոնիզմի հանդեպ:

Յ. Գյուրջյանի ստեղծագործական ճակատագրի, մասնագիտական կողմնորոշման հարցում իր դերն է խաղացել նաև նրա հայրենակից, տաղանդավոր դիմանկարիչ Ստեփան Աղաջանյանը, որի հետ նա ծանոթացել է Շուշիում 1900 թվականին: Փարիզի հանրահայտ գեղարվեստական կրթարաններից մեկը՝ Ռոդոլֆ Շուլիհանի մասնավոր ակադեմիան հենց նոր ավարտած և հայրենիք վերադարձած գեղանկարչի հետ Յ. Գյուրջյանի ունեցած երկարատև գրույցները, համատեղ կատարած էտյուդները խորացրին նրա սերը կերպարվեստի նկատմամբ, Էլ ավելի ամրապնդեցին նրան քանդակագործ դառնալու և այդ նպատակով Փարիզ գնալու իր մտադրության մեջ:

1906-ին Յ. Գյուրջյանն անուսնացել է Շուշվա մեծահարուստներից մեկի դուստր Դայկանուշ Ղալամյանի հետ և ուղևորվել Ֆրանսիա, ուր մեկ տարի ստվորել է Մոնպելի համալսարանի բժշկական ֆակուլտետում՝ ծանոթանալով մարդակազմության իմանունքներին, ապա՝ տեղափոխվել Փարիզ և ուսման անցել Ռ. Շուլիհանի գեղարվեստական ակադեմիայում: Այստեղ շուրջ երեք տարում նա մասնագիտական խոր գիտելիքներ ու անհրաժեշտ հմտություն է ծեռք բերել Ռառու Վեռնեի, Դանրի Գրեբերի և Պոլ Լանդովսկու դեկավարությամբ:

Դայ արվեստագետի ստեղծագործական ծևավորման մեջ հատկապես նկատելի է վերջինիս դերը: Լինելով ֆրանսիական ուշ, իր դարձ ապրօք կլասիցիզմի տիպիկ, թեպետև առավել օժտված ներկայացուցիչներից մեկը, Պ. Լանդովսկին սեփական արվեստում անշեղորեն հետևում էր քանդակային «իդեալական» ծևերի կառուցման խիստ կանոնավոր՝ ակադեմիական մեթոդին: Նա չափազանց մեծ նշանակություն էր տալիս պլաստիկ ծևերի կատարյալ մշակմանը, խնամքով հղկում իր

նախասիրած ճերմակ մարմարի մակերևույթը, միաժամանակ հայտնաբերելով դրանց կառուցվածքային ու ֆակտուրային հատկությունները: Բանեցնելով ձևառնական այդ սկզբունքները, նա իր կոթողային և նույնիսկ հաստոցային աշխատանքներում հասնում էր մոնումենտալ հնչողության: Դրա հետ մեկտեղ Պ. Լանդովսկու 1910-ական թվականների ստեղծագործության մեջ արտացոլում է գտել նաև ֆրանսիական «մոդեռն» հատուկ ոճավորության եղանակը, որի շնորհիվ նրա քանդակներն օժտվել են արտաքին փայլով ու գրավչությամբ: Գեղարվեստական այդ երեք քաղաքորիչներով՝ քանդակային ձևերի դասական պարզությամբ, մոնումենտալ ընդհանրացված հարթություններով ու ծավալներով, դեկորատիվ-ոճավոր նշակումներով են հատկանշվում նաև Պ. Լանդովսկու աշակերտներից շատերի, այդ թվում՝ Հակոբ Գյուրջյանի առավել բնորոշ աշխատանքները: Ֆրանսերենով շարադրված՝ «իմ մտքերը քանդակագործության նասին» ձեռագիր հոդվածում հայ արվեստագետը ևս գտնում է, որ իսկական քանդակը պետք է օժտված լինի վերոհիշյալ հենց այդ՝ կոմպոզիցիոն, մոնումենտալ ու դեկորատիվ հատկանշներով: «Այն քանդակները, - ավելացնում է Յ. Գյուրջյանը, - որոնցում համադրված կամ զուգորդված չեն տվյալ սկզբունքները, չեն կարող դիտվել որպես ճշմարիտ արվեստի գործեր»¹: Սակայն, Պ. Լանդովսկու աշխատանքների համեմատությամբ, Յ. Գյուրջյանի ստեղծագործություններն առանձնանում են ոչ միայն իրենց արտաքին՝ ֆորմալ արժանիքներով ու տեխնիկական կատարելությամբ, այլև դրանցում մարմնավորված գեղարվեստական կերպարների կենդանի հուզականությամբ, հոգեբանական խորությամբ, գաղափարային կոնկրետ բովանդակությամբ: Եվ այդ տեսակետից, ինչպես նաև Յ. Գյուրջյանի 1910-ական թվականների մի շարք դիմաքանդակներում նկատվող իմպրեսիոնիստական թարմ տպավորությունները կարծի մյուրի մեջ «արձանագրելու», այն շնչավորելու առումով հայ արվեստագետը պարտական է ոչ թե իր ակադեմիական ուսուցիչներին, այլ նոր ժամանակների եվրոպացի խոշորագույն քանդակագործ Օգյուստ Ռոդենին, որի փարիզյան աշխատանոցը նա հաճախել է 1910-1911 թվականներին: Լուվրի և Լյոււրսեմբուրգյան թանգարաններում Յ. Գյուրջյանը հիմնովին ուսումնասիրել է հին արևելյան (մասնավորաբար՝ հին եգիպտա-

¹ Տե՛ս. Պ. Գ. Ճրամքան. Ակոپ Գյորդյան. Երևան, 1973, ս. 76:

կան), անտիկ հունական, եվրոպական դասական քանդակը, և դա նույնպես իր կմիջն է դրել նրա պլաստիկական մտածողության վրա: Արվեստագետի ստեղծագործական ձևավորման համար կարևոր դեր են խաղացել նաև նրա անձնական շփումները ֆրանսիացի նշանավոր արձանագործներ Անտուան Բուրդելի, Արիստիդ Մայոլի և Շառլ Նեսպիոյի հետ:

Փարիզի արվարձաններից մեկում՝ Բուլոնում Յ. Գյուրջյանի ծեռք բերած արվեստանոցում են ստեղծվել նրա առաջին, հիմնականում մարմարից արված կամ բրոնզից ձուլված աշխատանքները՝ դարաբաղյան կարոտաբաղդ հուշեր արթնացնող, ազգային ոգով կերպարակերտված «Կարը» («Դորովել», 1910) և «Դայ գեղջկուիին երեխայի հետ» (1910) հարթաքանդակները, Մարգարիտ Շիրվանզադեի (1910) և Արշակ Չոպանյանի (1911)՝ ռեալիստական ձևերով լուծված, ջերմ ու մտերմիկ տրամադրությամբ թափանցված դիմաքանդակները, ոուս հանճարեղ նկարիչ Միխայիլ Վրուբելի հայտնի կտավներին ձայնակցող Դևի Փիգուրը (1912) և այլն:



Նկար 1.
«Քրիստոսի
գլուխը» («Մեռած
Քրիստոս», 1914)



Նկար 2. Իսայ Դոբրովեյմի
դիմաքանդակը (1913)



Նկար 3. Լև Տոլստոյի
դիմաքանդակը (1914)

Ֆրանսիացի նկարիչների և Փարիզի Գեղեցիկ արվեստների ազգային ընկերության ցուցահանդեսներում այս աշխատանքների կողքին Յ. Գյուրջյանը ներկայացրել է նաև այդ տարիների իր լավագույն գործերը՝ «Քրիստոսի գլուխը» («Մեռած Քրիստոս», 1914, նկ. 1), դաշնակահար և դիրիժոր Իսայ Դոբրովեյմի (1913, նկ. 2) և Լև Տոլստոյի (1914, նկ.

3) դիմաքանդակները, որոնք աչքի են ընկնում կերպարների հոգեբանական և հոլովական սուր, արտահայտիչ մեկնաբառնությամբ: Յ. Գյուրջյանը հմտորեն է օգտագործել կրաքարի և մարմարի պլաստիկական հատկությունները: Նրա հատիչը կենդանացրել է նյութի անհաղորդ, իներտ զանգվածը, մակերևույթը թափանցել լույսով և այն շնչեցրել լուսաստվերային մեղմ թրթիւներով կամ աշխույժ խաղով:

«Մեռած Քրիստոսի» ողբական կերպարում, նրա միտումնավոր խեղաքյուրված, ձգված-երկարած, մարդկային հոգեկան և ֆիզիկական տառապանջների դրոշմը կրող դիմաձևներում արտացոլվել են Առաջին աշխարհամարտի նախօրեին եվրոպական մտավորականության շրջաններում, հատկապես գրական-գեղարվեստական միջավայրում թանձրացած հուսահատության և հոռետեսության տրամադրությունները, «աստվածների աղջամուղջի», համընդիանուր լքվածության նիցշեական գաղափարները, որոնք իրենց առավել ցայտուն, ծայրահեռ դրսնորումներն էին գտնում սինվոլիստների և էքսպրեսիոնիստների ստեղծագործության մեջ:

Միանգամայն այլ՝ ռոդենյան ոճով, պլաստիկ ձևերի դասական պարզությամբ, բայց, միաժամանակ, իմպրեսիոնիստական զգայունությամբ ու հոգեբանական խոր իմացությամբ են լուծված ստեղծագործական ինքնամոռացման, հոգեսր և մտավոր ուժերի կենտրոնացման պահին պատկերված Ի. Ռոբրուկենի և Լ. Տոլստոյի դիմաքանդակները: Լև Տոլստոյի «Մտածողը» կոչված, բնականին մոտ և բնականից չորս անգամ խոշոր տարրերակներով հայտնի դիմաքանդակում Յ. Գյուրջյանը, պահպանելով ռուս գրողի արտաքին ննանությունը, նրա բնավորության ու խառնվածքի խարակտերային հատկանիշները, այսուհանդերձ, հասել է գեղարվեստական լայն ընդիանրացման, տիպականացրել նրա կերպարը:

Մոնումենտալ քանդակագործության բնագավառում Յ. Գյուրջյանի ձեռնարկած առաջին փորձն էր մասնակցությունը Բաքվի հայոց կոլտուրական միության գեղարվեստական մասնաճյուղի նախաձեռնությամբ՝ Երևանում Խ. Աբովյանի հուշարձանը կանգնեցնելու նպատակով՝ 1910-ին հայտարարված մրցույթին: Մրցութային համձնաժողովին Յ. Գյուրջյանի ներկայացրած էսքիզները (դրանք չեն պահպանվել), թեպետև արժանացան կերպարվեստի հարցերում բանիմաց Ալեքսանդր Շիրվանզադեի բարձր գնահատականին, այդպես էլ թղթի վրա

մնացին, քանի որ գործն ի վերջո հանձնարարվեց Փարիզում բնակվող հյայզգի մեկ այլ քանդակագործի՝ ծնունդով Երևանցի Անդրեաս Տեր-Մարուբյանի¹:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես Յ. Գյուրջյանը զորակոչվել է զինվորական ծառայության, թողել բուլոնյան իր արվեստանոցն ու մեկնել Մոսկվա: Այստեղ նա շարունակել է գրադարձ հաստոցային դիմաքանդակով, սակայն փոխվել է նրա ստեղծագործությունների հուզական շեշտը՝ հայեցողական կամ խորհրդավոր, ներփակ-ներինքնող տրամադրություններն իրենց տեղն են գիշել ոռման-տիկական անհանգիստ, հախուրն զգացնունքներին, որոնք երեմն դրսուրվել են էքսպրեսիվ կերպով: Այդպիսի տպավորություն են թողնում, հատկապես, Ֆյուրոր Շալյապինի (1917) և Բերհովենի (1919) դիմաքանդակները, որոնցում կերպարներն առավել արտահայտիչ դարձնելու նպատակով Յ. Գյուրջյանը քանդակային ծևերը կտրուկ աղճատել ու ենթարկել է համաշափական սուր շեղումների:



Նկար 4.
Ալ. Շիրվանզադեի դիմաքանդակը (1916)

1916-ին Թիֆլիսում են ստեղծվել Ալ. Շիրվանզադեի (նկ. 4), զորավար Անդրանիկի (այդ աշխատանքը մեզ չի հա-

¹ 1915-ին Բաքվի հայոց կուլտուրական միությանը հասցեագրված Ա. Տեր-Մարուբյանի նամակից տեղեկանում ենք, որ բնական չափերը զգալիորեն գերազանցող հուշարձանն արդեն ծովալել է բրոնզից և, պահանջվող գումարը վճարելուց հետո, կարող է Կովկաս ուղարկվել: Սակայն առաջացած ֆինանսական խնդիրների, ինչպես և պատերազմի հետ կապված խոչընդոտների հետևանքով ևս Արովյանի արձանը դեռ երկար մնաց Փարիզում: Ա. Տեր-Մարուբյանի մահից միայն վեց տարի անց՝ 1925-ին, Խորհրդային Դայաստանի կառավարությունը ծովալարանից գնեց ու Երևան հասցեց այս քանդակը, որը 1933-ին կանգնեցվեց Աստաֆյան (այժմ՝ Արովյան) փողոցում՝ Պողոս և Պետրոս առաքյալների հետևս չափերված եկեղեցու մոտ, ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնին կից հրապարակում: Մի քանի անգամ տեղահանվելուց հետո այն վերջնականապես հանգրվան գտավ Քանաքեռում՝ և Արովյանի տուն-թանգարանի առջև (1964):

սել) և մեծահարուստ Ա. Մելիք-Ազարյանցի՝ պլաստիկական նկարչագեղ ձևերով մշակված, դիմամիկ ռիթմով կառուցված, հոգերանական դիպուկ շտրիխներով բնութագրված, իսկ վերջին դեպքում՝ սոցիալական սուր նկարագրով օժտված դիմաքանդակները:

Արտահայտչական գուսակ ու չափավոր միջոցներով է Յ. Գյուրջյանը լուծել այդ տարիների իր լավագույն գործերից մեկը՝ Ս. Ռախմանինովի դիմաքանդակը (1915), ուր արտաքնապես անշարժ, անհաղորդ, փակ ձևերի մեջ է ամփոփել մեծ կոմպոզիտորի ու դաշնակահարի հոգենոր անհանգիստ կյանքը, նրա մարդկային ու ստեղծագործական բարդ ներաշխարհը:

Քանդակագործի պորտրետային այս աշխատանքները, ինչպես նաև դիցաբանական կամ կրոնական թեմաներով կատարված փոքրաչափ հորինվածքները («Լեդա», 1915, «Վեներա», 1916, «Սեղսագործություն», 1916) ներկայացվել են Մոսկվայում և Պետրոգրադում 1915-ին բացված «Արվեստի աշխարհ» (“Мир искусств”) ստեղծագործական միավորնան, ինչպես նաև 1917-ին և 1919-ին Թիֆլիսում կայացած՝ հայ արվեստագետների նորաստեղծ միության առաջին և երկրորդ ցուցահանդեսներում:

Թեպետ իր ստեղծագործական որոնումներում Յ. Գյուրջյանը մշտապես մնացել է ռեալիստական արվեստի սահմաններում, նա ոչ միայն ուշադիր հետևել է XX դարի առաջին երկու տասնամյակներում եվրոպական կերպարվեստում տարածում գտած մոդեռնիստական երևոյթներին, այլև չափավոր կերպով օգտագործել նորարարների՝ կուրիստների, ֆուտուրիստների, էքսպրեսիոնիստների մշակած արտահայտչական միջոցները: Ֆրանսերենով գրված իր վերոհիշյալ հոդվածում, ինչպես նաև Երվանդ Չոչարի հետ Փարիզում ունեցած գրույցի ժամանակ, Յ. Գյուրջյանը հաստատել է ռեալիստական արվեստի հանդեպ իր գերադասելի վերաբերմունքը, բայց միաժամանակ նշել, որ քանդակային բարձրարժեք գործեր հնարավոր է ստեղծել նույնիսկ «բնության, տեսանելի իրականության հետ արտաքին որևէ նմանություն չունեցող՝ վերացական, արստրակտ ձևերով»¹:

Յոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած տարիներին արվես-

¹ Տե՛ս. Բ. Գ. Ճրամբա. Ակով Գյորդյան, ս. 76:

տագետը զբաղվել է բոլշևիկյան կառավարության ծրագրած աշխատանքներով: Նպատակ էր դրված ոչ միայն «արվեստը դուրս բերել փողոց», այն մասսայականացնել, այլև «մոնումենտալ պրոպագանդայի» միջոցով գաղափարական խնդիրներ լուծել: Անվանի հեղափոխականների, մարքսիզմի հիմնադիրների, կուսակցության առաջնորդների, ինչպես և մշակութային առանձին գործիչների հիշատակը հավերժացնող բազմաթիվ հուշարձաններ պետք է կանգնեցվեին: Նախատեսված ծրագրի շրջանակներում Յ. Գյուրջյանը կատարել է Միխայիլ Վրուբելի հուշարձանի կավե մոդելը և Կարլ Մարքսի հոկայական՝ 15 մետրանոց բազմաֆիգուր կոթողի էսքիզները (հայտնի են լուսանկարներով): Սակայն անհրաժեշտ միջոցների և հաճապատասխան նյութերի բացակայության պատճառով դրանք չեն իրագործվել: 1921-ին Խորհրդային Ռուսաստանի լուսավորության ժողկոն Ա. Վ. Լունաչարսկու հատուկ գործությամբ Յ. Գյուրջյանը գործուղվել է Փարիզ, որտեղից այլևս հետ չի վերադարձել:

1920-ական թվականներին քանդակագործի արվեստն աննախաղեա վերելք է ապրել: Այդ շրջանում նա ստեղծել է հիշարժան տասնյակ աշխատանքներ, ակտիվորեն մասնակցել ֆրանսիացի, ֆրանսահայ և ռուս արվեստագետների՝ Փարիզում, Բրյուսելում, Անտվերպենում, Բելգրադում, Պրագայում, Տոկիոյում և այլուր կազմակերպված ցուցահանդեսներին: Այդ քաղաքների թանգարաններում են պահպան հայ արվեստագետի գործերից մի քանիսը: 1924-ին Յ. Գյուրջյանը ցուցահանդես է բացել Սյու Յորքում, Էլ ավելի ծավալում էր 1926-ին Փարիզի Շարպանտյե պատկերասրահում տեղի ունեցած նրա անհատական մեջ (շուրջ 100 աշխատանք ընդգրկող) ցուցահանդեսը¹, որից հետո Յ. Գյուրջյանի վրա լուրջ ուշադրություն են դարձել ֆրանսիացի հեղինակավոր արվեստաբաններ Գյուստավ Կանը, Լուի Վոքսելը, Դենի Ռոշը, Մաքսիմիլիան Գորյեն² և ուրիշներ:

Այդ տարիներին Յ. Գյուրջյանի ստեղծագործության թեմատիկ ցանկը նկատելիորեն ընդլայնվել է: Առավել կարևորվել է սյուժետային քանդակը, որն ինքը՝ արվեստագետը բնութագրել է որպես «ազատ

¹ Տե՛ս. Les sculptures de A. Gurdjian. Paris, Hotel Jean Charpentier, 1926:

² Մաքսիմիլիան Գորյեն հայ քանդակագործին նվիրած առաջին մենագրության հեղինակն է (տե՛ս. **Maximilien Gauthier**. Gurdjian. Paris, Les Grameaux, 1952, հայերեն գուգահեռ թարգմանություն՝ Արշակ Չոպանյանի):

ստեղծագործություն»: 1920-ական թվականներին նա հաճախ է անդրադարձել անտիկ դիցարանությանը, Դին և Նոր Կտակարաններին, պատմական դեմքերին ու իրադարձություններին՝ «Լեդա», 1922, «Դիանա», 1922, «Խաչից իշեցնելը», 1923, «Ողբ», 1923, «Կլեոպատրա», 1924,

«Սալոմե», 1926 (նկ. 5) և այլն: Դրանցից առավել ուշագրավ աշխատանքն, անշուշտ, «Սալոմեն» է, որը հայտնի է բրոնզից ծուլված և բելգիական սև գրանիտից կերտած տարբերակներով: Ավետարանում հիշատակված այս «ճակատագրական կնոջ» (ինչպես և, ի դեպ, Դուդիթի կամ Կլեոպատրայի) կերպարը բազմից է գրավել ռոմանտիզմի ու սիմվոլիզմի դիրքերում կանգնած կամ դրանց հարող գրողների և արվեստագետների ստեղծագործական երևակայությունը. իիշենք թեկուզ Գ. Ֆլորերի, Ս. Մալարմեի, Օ. Ռայլի չափածու և արձակ երկերը, Ժ. Մաս-



Նկար 5. «Սալոմե» (1926)

նեի, Ռիխարդ Շտրաուսի, Ֆ. Շմիտի երաժշտական դրամաները, Գ. Մորոյի, Գ. Կլիմտի, Օ. Բյորդսլիի գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքները, հայերից՝ Վ. Սուլենյանցի և Վ. Գայֆենյանի կտավները: Յ. Գյուրջյանի «Սալոմեն» այդ կերպարի գեղարվեստական մարմնավորման առավել հաջող օրինակներից է: Երրայական արքայադարձեր դիվային ամբարտավան գեղեցկությունը, նրա հեշտալի ու զգայատենչ մարմնի ծևերը, ընդունած դիրքը, գլխի կամակոր, հպարտ դարձումը, արյունոտ ընծան կարծես «գուրգուրող» ծեռքի ծալքերը, ինչպես և եգիպտական ոճով՝ ուղիղ անկյան տակ տարածության մեջ շրջված ու հարթված, հստակ ու ճկուն ուրվագեղերով սահմանազատված ծավալները ոչ միայն դեկորատիվ նրբագեղություն, այլև արտակարգ պլաստիկական ուժ, նոնումնենտալ շունչ են հաղորդում չափսերով համեստ այս աշխատանքին:

Յ. Գյուրջյանի 1920-ական թվականների ստեղծագործության մեջ նկատելի տեղ են զբաղեցրել նաև երաժշտական-պարային, տեսլարա-

նային, սպորտային մոտիվները («Տավղահարուիկ», 1922, «Երաժշտություն», 1923, «Պարուիկ», 1922, «Պար», 1923, «Տանգո», 1925, «Ցլամարտ», 1923, «Բոնցքամարտ», 1923 և այլն): Իր պորտռետային բազմաթիվ աշխատանքներում նա կիրառել է արտահայտչական նորանոր ձևեր ու եղանակներ՝ խորացնելով և ցայտեցնելով պատկերված մարդկանց հուզական-հոգերանական նկարագիրը («Տիգրան Խան-Քելեքյան», 1921, «Սերոբ Սվաճյան», 1922, «Տիկին Մարտիրոս», 1923, «Տիկին Կրիչևսկայա», 1924, «Ալիսա Սմիռնովա», 1925, «Սևամորթը», 1926, «Գեղորգի Յակովով», 1927, «Մարտիրոս Սարյան», 1927 և այլն):

Յ. Գյուրջյանի փարիզյան քանդակներին բնորոշ է ոչ միայն ժամրային բազմազանությունը, այլև կոմպոզիցիոն տիպերի ու տեսակների առատությունը՝ կլոր քանդակներ, բարձրաքանդակներ, հարթքանդակներ, կիսարձաններ, կիսաֆիգուրներ, միաֆիգուր և բազմաֆիգուր հորինվածքներ: Յ. Գյուրջյանն ազատորեն է կիրառում ինչպես դասական, այնպես էլ հին եգիպտոսի, արխաիկ Յունաստանի, հայկական միջնադարի, 1920-ական թվականներին տարածում գտած «զարդային ոճի» («ար դեկո») գեղարվեստական սկզբունքները: Ընդ որում, նրա գործերում հանդիպող դեկորատիվ տարրերը երբեք չեն դառնում ինքնանպատակ: Քանդակների գունավորումը կամ թեթևակի երանգավորումը, գրաֆիկական շեշտադրումները, բնական ձևերի աղճատումները, անսովոր շեղումներն ու կրծատումները, այդ ամենը Յ. Գյուրջյանի կողմից արվում է չափի այնպիսի զգացողությամբ, գեղարվեստական այնպիսի տակտով, որ չի թողնում էկլեկտիկ կամ մաներային քնահաճ տպավորություն:

Նախորդ տասնամյակի համեմատությամբ, 1920-ական թվականներին և առհասարակ՝ փարիզյան շրջանում Յ. Գյուրջյանի ստեղծած աշխատանքներում նյութի ընտրության ու դրա մշակման առումով ևս որոշակի փոփոխություններ են նկատվում: Արվեստագետը փաստորեն հրաժարվում է մարմարից, դեկորատիվ-ոճավորական խնդիրներ լուծելու նպատակով կավի և գիպսի հետ մեկտեղ դիմում է փայտին, իսկ մոնումենտալ-կոթողային տպավորության հասնելու համար օգտվում կարծրակուռ որձաքարերից՝ սևակուճ (բազալտ), հատաքար (գրանիտ): Դա նույնպես վկայում է ինչպես արխաիկ հունական, այնպես էլ եգիպտական հին քանդակի հանդեպ Յ. Գյուրջյանի աճող հետաքրքրությունը:

1930-ական թվականներին նշված միտումները շարունակվում են արվեստագետի լավագույն դիմաքանդակներում, որոնցից են «Դերասանուհի Նենրիետտա Պասկարը» (1933) և «Կարողիկոս Գարեգին Շովսեփյանը» (1935): Նեռավոր, աղոտ, գրեթե աննշմար նմանություն կա Յ. Պասկարի դիմաքանդակի և Եգիպտական հին կերպարվեստի գլուխագործոցներից մեկի՝ Նեֆերտիտիի կիսանդրու միջև։ Նկատի ունենք ոչ միայն դրանց կոմպոզիցիոն համաչափելի, դիմահայաց կառուցվածքը, քանդակային ձևերի նրբագեղությունն ու հղվածությունը, գույնի միջոցով կանանց դեմքերը կենդանացնելու, դիմագիտերը շեշտելու եղանակը, այլև այս երկու աշխատանքներում արտահայտված՝ քնարական փոքր ինչ թախտոտ տրամադրությունը, որն իր տեսանելի դրսւորումն է ստացել թե՛ Յ. Պասկարի, թե՛ ազնվազարմ Եգիպտուի շուրթերին հագիվ նշմարված, թերեւ ժայիտի ու նրանց մտամիով հայացքների մեջ։ Միևնույն ժամանակ, տարիքն առած, բայց դեռ գեղեցիկ դերասանուի կերպարը Յ. Գյուրջյանի դիմաքանդակում ծեռք է բերել հոգեբանական ավելի կոնկրետ ու սուր մեկնարանություն։

Կարողիկոս Գարեգին Շովսեփյանի դիմաքանդակում Յ. Գյուրջյանին հաջողվել է հայ մշակույթի երախտավորի ազգային շեշտված դիմագիտերի՝ ճակատն ակոսող խոր կնճիռների, ոսկրոտ այտերի, պարապ թողնված ու ստվերութված ակնախորշերի, քարակ շուրթերի տիխուր, վշտագին արտահայտությունը համադրել մտավոր լարված, իմաստուն կյանքով ապրող ծերունու ներքին՝ հոգևոր հարուստ նկարագրի հետ։

Յ. Գյուրջյանի անհմալիստական՝ կենդանական ժամրին պատկանող քանդակներից շատերը («Սիամի կատուն», 1932, «Աղվեսը», 1934 (նկ. 6), «Կապիկը», 1938, «Որսաշունը», 1939 և այլն), արվեստաբան Ռ. Դրամբյանի դիպուկ բնութագրությամբ, գրեթե



Նկար 6. «Աղվեսը» (1934)

«պորտրետային» կերպավորում են ստացել, քանի որ դրանցում հեղինակը ձգուում է ներկայացնել ոչ միայն կենդանիների ցեղային բնորոշ հատկանիշները, այլև նրանցից յուրաքանչյուրի «քնավորության» անհատական դրսերումները՝ համարձակություն, երկչոտություն, խորամանկություն, հետաքրքրություն և այլն¹:

Մերկ կնոջ մարմինը ներկայացնելիս («Մերկ մարմին», 1922, «Մերկություն», 1933, «Պատանեկություն», 1934, «Կարիստիդ», 1935, «Կանացի իրան», 1939) Յ. Գյուրջյանը հաշվի է առնում ոչ միայն անտիկ-դասական, այլև արդի քանդակագործության մեջ այդ ժամրին հաճախ անդրադարձած և դրան կենսալի նոր լիցք հաղորդած վարպետների, մասնավորապես՝ Արիստիդ Մայոլի ստեղծագործական փորձը:

1935-ից հետո և, առանձնապես, 1940-ական թվականներին արվեստագետը հոգեկան և ֆիզիկական ուժերի անկում է ապրում: Նա գրեթե դադարում է հանդես գալ փարիզյան գեղարվեստական սալոններում: 1948-ին Յ. Գյուրջյանը վախճանվում է: Յոթ տարի անց Փարիզի Լև Տոլստոյի անունը կրող պուրակներից մեկում տեղադրվում է հայ քանդակագործի «Մտածողը»՝ ոռու հանճարեղ գրողի վերոհիշյալ մեծադիր կիսանդրին, որի հանդիսավոր բացման արարողության ժամանակ Անդրե Մորուան ասել է. «Տարիներ առաջ, իբրև եզակի բացառություն, Փարիզի Ալմա հրապարակում տեղադրվեց լեի վիպասան Շենրիկ Սենկեիչի հուշարձանը: Այսօր մենք բացում ենք ևս մի օտարերկացու՝ Լև Տոլստոյի հուշարձանը, որի հեղինակն է նոյնպես այլազգի՝ Փարիզում ապրած հայ տաղանդավոր քանդակագործ Շակոր Գյուրջյանը: Թող այս քարակերտ իրաշալի կոթողը դառնա մեր ժողովուրդների բարեկամության խորհրդանիշը»²:

Անցավ ևս մի քանի տարի, և իրականացավ Յ. Գյուրջյանի վերջին ցանկությունը՝ հայրենիք վերադարձան ու Հայաստանի պետական պատկերասրահում իրենց պատվավոր տեղը գրավեցին նրա անձնական արխիվը և ստեղծագործական հարուստ ժառանգությունը՝ շուրջ 450 աշխատանք:

Դժբախտաբար անկատար մնաց արվեստագետի մեկ այլ երազան-

¹ Տե՛ս, Պ. Գ. Ճրամքն. Ակոپ Գյորդյան, ս. 70-72:

² Տե՛ս, Ալոյ Արզւմանն. Տկալութոր Ակոպ Գյորդյան // Օգոնեկ, 1982, դեկտեմբեր, N 50, с. 28 :

քը. նրա փափագն էր Շուշվա մերձակա ժայռերի վրա քանդակված տեսմել դեռ 1923 թվին իր կերտած՝ փոքրաչափ, բայց մոնումենտալ մեծ թափ ունեցող «Դադրանակը» (նկ. 7): Դիշեցնենք, որ սրանից քառորդ դար առաջ, երբ նշվում էր Յ. Գյուրջյանի 100-ամյա հոբելյանը, Երևանի քաղաքային իշխանությունները որոշում ընդունեցին երկկողմանի այս բարձրաքանդակի խոշորացրած տարրերակը տեղադրել Մարշալ Բաղրամյանի պողոտայի վրա՝ այնտեղ, ուր այսօր կանգնած է փառապանծ զորավարի ծիարձանը:

Յ. Գյուրջյանի «Դադրանակը» խոշորացնելու և այն համապատասխան նյութի մեջ տեղափոխելու աշխատանքները Երևանի քաղաքային իշխանությունները որոշում ընդունեցին Երևանի հետագայում, ինչ-ինչ պատճառներով, գործը դանդաղեց և այդպես էլ չհասավ իր նպատակին: Գուցե հիմա է եկել ծիշտ ժամանակը կրկին այդ հարցով մտահոգվելու ու հադրանակած Արցախում դնել Յ. Գյուրջյանի «Դադրանակը»: Դրանով մենք մեր հարգանքի տուրքը կմատուցենք հայրենասեր արվեստագետի հիշատակին և այդպիսով, վերջապես, կիրականացնենք նրա վաղենի երազանքը:



Նկար 7. «Դադրանակ» (1923)

հանձնարարվեցին քանդակագործ Լևոն Թոքմաջյանին, որն էլ ոգևորությամբ ընդունեց առաջարկը: Սակայն հետագայում, ինչ-ինչ պատճառներով, գործը դանդաղեց և այդպես էլ չհասավ իր նպատակին: Գուցե հիմա է եկել ծիշտ ժամանակը կրկին այդ հարցով մտահոգվելու ու հադրանակած Արցախում դնել Յ. Գյուրջյանի «Դադրանակը»: Դրանով մենք մեր հարգանքի տուրքը կմատուցենք հայրենասեր արվեստագետի հիշատակին և այդպիսով, վերջապես, կիրականացնենք նրա վաղենի երազանքը: